Կարծիք

Սեբբագգալա Տոննի Մայամբալայի «Ռուսաստանի Դաշնությունում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի գնահատում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տնտեսական տատանողականության պայմաններում մեծանում է գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների և նորարարությունների շուկաների դերն ու քանակական գնահատման անհրաժեշտությունը: Վերջիններս հանդիսանում են որակական տնտեսական աճի կարևորագույն նախադրյալներից: Դրանք նպաստում են գիտելիքի ստեղծման և ներդրումների ներգրավման ինստիտուտների արդյունավետությանը, բարձր տեխնոլոգիական թողարկմանը, կանխորոշում տեխնոլոգիական ինքնիշխանությունը: Այնուամենայնիվ, տարածաշրջանային անհամասեռությունը և արտաքին սահմանափակումները խոչընդոտներ են ստեղծում նորարարական աճի համար, առավել ևս ՌԴ-ում: Այս ամենը ձևավորում է պահանջարկ այնպիսի գործիքակազմի մշակման համար, որը թույլ կտա վերլուծել ՌԴ-ում ինստիտուտների որակի և տարածաշրջանների նորարարական արտադրողականության միջև կապը՝ պետական կառավարման կատարելագործման նպատակով:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է մշակել տեսական և կիրառական դրույթներ, որոնք ուղղված են ՌԴ գիտական հետազոտությունների և նորարական շուկաների զարգացման համար արդյունավետ ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծմանը՝ տարածշրջանային տարբերությունները որոշող գործոնների և նորարարական շուկաների զարգացման դինամիկայի վերլուծության միջոցով՝ օգտագործելով տնտեսական, մաթեմատիկական և վիճակագրական-վերլուծական մեթոդները:

Նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Համակարգել ինստիտուցիոնալ միջավայրի հետազոտման տեսական մոտեցումները և մշակել հայեցակարգային սխեմա, որը սահմանում է գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների գործառնության ու զարգացման վրա ինստիտուցիոնալ գործոնների ազդեցության ուղիները:
- Ընդհանրացնել գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների ինստիտուցիոնալ կարգավորման փորձը՝ նորարարական համակարգերի համեմատական վերլուծության հիման վրա, և վեր հանել ռուսաստանյան պայմաններին համապատասխանող մակրոտնտեսական տարրերը:
- Ձևավորել ցուցանիշների համակարգ գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների ինստիտուցիոնալ միջավայրի քանակական գնահատման համար և իրականացնել տարածաշրջանների համեմատական արդյունավետության գնահատում՝ կիրառելով տվյալների փաթեթավորման վերլուծության (DEA) մեթոդը և ռեգրեսիոն մոդելավորումը:
- Մշակել տարածաշրջանային ինստիտուցիոնալ տարբերակման (դիֆերենցիացիայի) գործոնների դասակարգում (խոչընդոտներ և խթաններ) և ռեգրեսիոն վերլուծության հիման վրա սահմանել յուրաքանչյուր գործոնի ազդեցության ուղղությունն ու ուժը տարածաշրջանների նորարարական արդյունավետության վրա:
- Իրականացնել ՌԴ սուբյեկտների տարածական-կլաստերային վերլուծություն, առանձնացնել նմանատիպ ինստիտուցիոնալ բնութագրեր ունեցող տարածաշրջանների խմբեր և ձևավորել տարածաշրջանների տիպաբանություն՝ ըստ ինստիտուցիոնալ ու նորարարական զարգացման պրոֆիլների՝ մեքենայական ուսուցման մեթոդներով ստուգելով կլաստերային լուծումների կայունությունը:
- Բացահայտված ինստիտուցիոնալ սահմանափակումների և կլաստերի ռեսուրսային հնարավորությունների հիման վրա մշակել հանձնարարականներ գիտական հետազոտությունների և

նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ կարգավորման մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ՝ ուղղված միջտարածաշրջանային անհամաչափության (ասիմետրիայի) նվազեցմանը և տարածաշրջանային նորարարական համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

- Մշակվել է գիտական հետազոտությունների և նորարարական շուկաների ինստիտուցիոնալ միջավայրի հայեցակարգային շրջանակ, որը միավորում է ինստիտուցիոնալ-էվոլյուցիոն, տարածական և նորարարական մոտեցումները մեկ վերլուծական շրջանակի մեջ, որն իր հերթին ներառում է այն ուղիները, որոնց միջոցով ինստիտուցիոնալ գործոնները ազդում են տարածաշրջանների նորարարական զարգացման և գիտական ու նորարարական գործունեության տարածական կազմակերպման վրա՝ տնտեսական կարգավորման համակարգում:
- Մշակվել է տարածաշրջանների ինստիտուցիոնալ միջավայրի համեմատական արդյունավետության քանակական գնահատման մոտեցում՝ ուղղված ինստիտուցիոնալ որակի և նորարարական արդյունավետության միջև կայուն կապերի բացահայտմանը՝ տվյալների փաթեթավորման վերլուծության (DEA) մեթոդի կիրառմամբ՝ 16 մուտքային և 3 ելքային ցուցանիշների համակարգով, որը համալրվել է գործոնային վերլուծությամբ և ռեգրեսիոն մոդելավորմամբ: Սա թույլ է տալիս գնահատել ինստիտուցիոնալ ռեսուրսների փոխակերպման արդյունավետությունը նորարարական արդյունքների՝ ապահովելով բացահայտված կապերի տնտեսագիտական մեկնաբանությունը: Ի տարբերություն միամակարդակ գնահատականների, առաջարկվել է կապ արդյունավետության չափման և դետերմինանտների տնտեսագիտական մեկնաբանության միջև:
- Բացահայտվել և քանակապես հիմնավորվել է տարածաշրջանային ինստիտուցիոնալ տարբերակման գործոնների դասակարգումը, որը

ներառում է հետազոտությունների և նորարարական շուկաների զարգացման խթանները (գիտական անձնակազմի թվաքանակ, ԳՀՓԿ մեջ ներդրումներ, թվայնացման մակարդակ, ՓՄՁ-ների ակտիվություն) և խոչընդոտները (գործազրկության մակարդակ, որակյալ անձնակազմի պակասուրդ, ենթակառուցվածքների մեջ անբավարար ներդրումներ), ինչպես նաև իրականացվել է ՌԴ տարածաշրջանների խմբավորում ըստ ինստիտուցիոնալ արդյունավետության և նորարարական գործունեության պրոֆիլների:

- Մշակվել է Ռուսաստանի տարածաշրջանների նորարարական զարգացման վրա ինստիտուցիոնալ գործոնների ազդեցության գնահատման տեսչական մոդել, և մշակվել է այդ գործոնների տիպաբանություն՝ կլաստերային վերլուծության կիրառմամբ: Մոդելը սահմանում է ինստիտուցիոնալ պարամետրերի և նորարարական արդյունքների միջև վիճակագրական կապերի ուղղությունը և համեմատական ուժը: Տիպաբանությունը նույնականացնում է նմանատիպ ինստիտուցիոնալ միջավայր և նորարարական գործունեության պրոֆիլներ ունեցող տարածաշրջանների խմբերը: Ի տարբերություն տարատեսակ ռեգրեսիոն գնահատականների և առանձին կլաստերացման, առաջարկվել է տարածաշրջանային կառավարման խնդիրների մոդելային վերլուծության և տիպաբանության միասնական հաջորդականություն:
- Մշակվել են ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման կառավարման նորարարական և ներդրումային մեխանիզմներ, որոնք ուղղված են տարածաշրջանային նորարարական համակարգերի հավասարակշռության բարելավմանը և գիտական ու տեխնիկական ներուժի ամրապնդմանը: Այս մեխանիզմները ներառում են ինստիտուցիոնալ կարգավորման միջոցառումների համալիր և ուղղված են միջտարածաշրջանային ասիմետրիաների և ինստիտուցիոնալ ռիսկերի նվազեցմանը՝ գիտական և նորարարական զարգացման մակրոտնտեսական քաղաքականության շրջանակներում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ինչպես նաև արդյունքների փորձարկումն ու հրապարակումը:

Ատենախոսության առաջին՝ **«Գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման տեսական հիմքերը»** գլխում քննարկվել են ՌԴ-ում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների ինստիտուցիոնալ զարգացման պատմական ակնարկը, տրվել են իրավական դաշտում առկա կարգավորող նորմերը, ափոփվել են մի շարք հայտնի տեսությունների դրույթները նշված թեմայի շրջանակում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ռուսաստանի Դաշնությունում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի արդի վիճակը»** գլխում իրականացվել է ՌԴ-ում գիտահետազոտական ոլորտում մի շարք ցուցանիշների վերլուծություն և համադրություն, մասնավորապես՝ գիտական անձնակազմի թվաքանակը, ԳՀՓԿ մեջ ներդրումները, թվայնացման մակարդակը, ՓՄՁ-ների ակտիվությունը, միջին աշխատավարձերը, հրապարակված հոդվածների քանակը, ներգրավված ծրագրերի քանակը, միջազգային համագործակցությունը և այլն:

Ատենախոսության երրորդ՝ **«Ռուսաստանի Դաշնությունում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի գնահատման գործիքակազմը»** գլխում ձևավորվել է ցուցանիշների համակարգ գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների ինստիտուցիոնալ միջավայրի քանակական գնահատման համար և իրականացնվել տարածաշրջանների համեմատական արդյունավետության գնահատում՝ կիրառելով տվյալների փաթեթավորման վերլուծության (DEA) մեթոդը և ռեգրեսիոն մոդելավորման կիրառմամբ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը զերծ չէ նաև թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Աշխատության առաջին նորույթը, այն է՝ մշակվել է գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների ինստիտուցիոնալ միջավայրի հայեցակարգային շրջանակ..., չի կարող հանդիսանալ ատենախոսության նորույթ, քանի որ այդ շրջանակը (սխեման) իրենից ներկայացնում է այլ աղբյուրներից ստացված տվյալների համակարգում, սինթեզավորում և ամփոփում սխեմայի տեսքով: Նույն սկզբունքը կիրառելի է աշխատությունում արված բոլոր նմանատիպ սխեմաների նկատմամբ, մասնավորապես, գծապակտեր 4-ի՝ «Գիտական հետազոտությունների և նորարարությունների ինստիտուցիոնալ վերլուծության ախտորոշիչ շրջանակի» նկատմամբ: Այն իրենից ներկայացնում է, օրինակ՝ Ռ. Քուզի, Ռ. Նելսոնի և այլ հեղինակների արդեն իսկ առկա տեսությունների սինթեզավորում ու համակարգում և նույնպես չի կարող հանդիսանալ հետազոտության նորույթ:

2. Աշխատությունում իրականացված վերլուծությունը ներառում է մինչև 2021-2022 թթ. տվյալներ, մինչդեռ հինգ տարիների ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ, որոնք արտացոլված չեն աշխատությունում: Աշխատանքի արդիականությունն ապահովելու համար հարկավոր է կիրառել թարմ վիճակագրական և իրավական տվյալներ: Գտնում ենք, որ նշված տվյալների կիրառումը չի արտացոլում ներկայիս ՌԴ գիտահետազոտական ոլորտի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և տվյալները թարմացման կարիք ունեն:

3. Ատենախոսությունում առկա գծապատկերներից և աղյուսակներից ոչ մեկում տրված չէ կիրառված տվյալների աղբյուրները: Հետազոտության օբյեկտիվությունն ու տվյալների հուսալիության հաստատման համար այդ տեղեկատվությունը հանդիսանում է պարտադիր:

4. Աշխատությունում ծավալուն և մանրակրկտորեն ներկայցված է ՌԴ ինստիտուցիոնալ միջավայրի պատմական ակնարկը, սակայն շատ քիչ դեր է տրված միջազգային փորձի՝ այլ երկրների ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման ուսումնասիրությանը (4 էջ, ներառյալ հավելված A--ն): Գտնում ենք, որ միջազգային փորձի ուսումնասիրությունն ու մի շարք երկրների հաջողված

փորձն ու անցած ուղու ուսումնասիրությունն աշխատանքն ավելի ամբողջական կդարձներ, իսկ առաջարկությունները՝ հիմնավոր:

5. Էջեր 67-68-ում հստակեցված չէ, թե ո՞ր ժամանակաշրջանում է Web of Science և Scopus շտեմարաններում ինդեքսավորվող ռուսական հրապարակումների նշված մասնաբաժինը եղել: Նույն խնդիրն է առաջանում սույն էջի 4-րդ կետում:

6. Էջ 87-ում ներկայացված են գիտական աշխատողների միջին աշխատավարձերը 2021թ. դրությամբ և համեմատական է իրականացվում 2014թ. հետ: Կարծում ենք, որ կարելի էր համեմատել ոչ միայն նախկին, այլ նաև այլ ոլորտների, միջին և նվազագույն աշխատավարձերի հետ, որպեսզի ավելի պատկերավոր լիներ, թե արդյո՞ք դա շատ է, թե քիչ: Նաև աշխատավարձերի ուսումնասիրության ընթացքում մեծ դեր է կատարում միջնաթվի (մեդիանա) արժեքների ուսումնասիրությունը, որով ավելի պատկերավոր են դառնում ոլորտում առկա տատանումները տարբեր խմբերի միջև:

7. Եզրակացություններ բաժնի 2-րդ կետում հեղինակը նշում է, որ իր կողմից մշակված մոդելի կիրառմամբ գնահատել է ՌԴ տարածաշրջանների ինստիտուցիոնալ արդյունավետությունը 2019-2022 թթ., մինչդեռ պարագրաֆ 3.1-ում հեղինակը նշում է,·որ կիրառում է DEA մոդելն ու ռեգրեսիոն վերլուծությունը, ինչպես նաև նկարագրվել են նշված մոդելները: Սա նշանակում է, որ մոդելն իր կողմից չէ մշակվել, այլ իր կողմից կիրառվել է ՌԴ տարածաշրջանների համար:

Եզրակացություն

Բովանդակության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունն իրենից ներկայացնում է հետազոտական աշխատանք, ինչի մասին վկայում են ուսումնասիրությունում ներկայացված արդյունքները: Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, այնպես ինչպես ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները հիմնավորված և ընդունելի են: Հետազոտության արդյունքում առաջադրված առաջարկությունների կիրառումը կարող է դրական ազդեցություն ունենալ ՌԴ-ում գիտահետազոտական ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի բարելավմանը:

Այս աշխատանքի ինքնուրույնությունն ու ամբողջականությունը, հետազոտությունում օգտագործված տեսական և գործնական նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ ատենախոսությունն արժանի է բարձր գնահատականի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են 21 գիտական հրապարակումներում:

Սեբբագգալա Տոննի Մայամբալայի **«Ռուսաստանի Դաշնությունում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի գնահատում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու,
ՌՀՀ ավագ դասախոս **Հ.Գ. Պետրոսյան**

Հ.Գ. Պետրոսյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝

ՌՀՀ գիտական քարտուղար՝
բ.գ.թ. Ռ.Ս. Կասաբաբովա

15.05.2026թ.